ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, էլ. փոստ:gnumner.kanach@yerevan.am

«12» մայիսի 2025թ.

ՀՀ/Ելից 72/177-25

ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի տնօրեն Է. Խրիմյանին
(ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան փ., շ. 30, բնկ. 23)
ՀՎՀՀ՝ 08290479
էլ. հասցե՝ (khrimian.emi@gmail.com)

Ծանուցում

պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

2025 թվականի փետրվարի 27-ին «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի և «ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև կնքված **ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-25/08-4 ծածկագրով պայմանագրի շրջանակներում նախատեսվել են ֆինանսական միջոցներ և 2025 թվականի ապրիլի 08-ին Կատարողին ներկայացվել է համաձայնագրի նախագիծը և առաջարկվել տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել և ներկայացնել Պատվիրատուին:**

Ծանուցման մեջ նշված ժամկետում «ԷՅ ՎԻ ԷԼ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից համաձայնագիր չի ներկայացվել:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ Կառավորության 2017 թվականի մայիս 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջների՝ չստորագրվելու դեպքում համաձայնագիրը ենթակա է միակողմանիորեն լուծման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը միակողմանի լուծում է պայմանագիրը **7979400 (յոթ միլիոն ինը հարյուր յոթանասունիննը հազար չորս հարյուր) ՀՀ դրամ** գումարի չափով:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՄԵՆ ԲԵԳՈՅԱՆ

Կատարող՝ Ն. Ավագյան
Հեռ.՝ 011-514-745